

**ԻՐԱՎԱՍՏԵՂԾ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ
ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ**

Ակնհայտ է՝ ինչպես են ազդում անհաջող իրավական լուծումները երկրի սոցիալական վիճակի վրա. դրանք մշտապես հանգեցնում են ժողովրդի դժգոհությանը, հանրահավաքների և տարատեսակ ցնցումների: Իրավունքն «առհասարակ» նորմատիվ ակտերի ձևով լուծում է սոցիալական, քաղաքական և տնտեսական խնդիրներ, որոնք հասարակության զարգացմանը զուգահեռ կանգնում են օրենսդրի առջև: Կախված այն հանգամանքից, թե որքանով է ձևավորված օրենսդրական բազան համապատասխանում հասարակության պահանջներին, իրավունքը կարող է կա՛մ նպաստել սոցիալ-տնտեսական առաջընթացին, կա՛մ արգելակել առաջընթացը և նույնիսկ ուղղակի վնաս հասցնել հասարակությանը:

Քննարկելով ՀՀ ժամանակակից իրավական համակարգի խնդիրները՝ կարելի է փաստել, որ ամենաահաճախ և արդարացիորեն քննադատության է ենթարկվում հենց իրավաստեղծ գործունեությունը: Դրա համար նախևառաջ առկա են օբյեկտիվ նախապայմաններ, որոնց թվում հատկապես ակնհայտ է նախորդ հազարամյակում սկսված և մինչ օրս չավարտված առանձնահատուկ «օրենսդրական բումը»², որի տակ հասկացվում է օրինաստեղծ գործունեության ծայրահեղ ինտենսիվ տեմպը (որը միշտ չէ, որ արդարացված է): Նաև կարելի է ավելացնել գիտնականների կողմից նշվող այնպիսի թերություններ, ինչպիսիք են նորմատիվ իրավական ակտերի հսկայական զանգվածի ձևավորման քառասյին բնույթը, իրավական կարգավորման առաջնահերթությունների չպահպանումը, նոր օրենքների ընդունումն առանց պահպանելու վերջիններիս կապն առկա օրենսդրության և միջազգային իրավունքի նորմերի հետ³,

¹ ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ ի. գ. դ., պրոֆեսոր Ա. Գ. Վաղարշյան:

² Տե՛ս u Комаров С. А., *Общая теория государства и права*. СПб., 2001, էջ 40:

³ Տե՛ս u Лопатин В. Н., *Конституционная законность и проблемы нормотворчества в России // Журнал рос. права*, 2004, № 5, էջ 8:

օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի միջև համակարգային կանոնների չկահպանումը, միասնական տերմինաբանության բացակայությունը և իրավաբանական տեխնիկայի ժամանակով ստուգված այլ կարևորագույն կանոնների չպահպանումը¹:

Որպես թարմ օրինակ վերցնենք Սահմանադրական բարեփոխումների նախօրեին ադմուկ բարձրացրած անձնագրերի և նույնականացման քարտերի խնդիրը: Թվում էր՝ երկար ժամանակ պետությունը բարեփոխումներ էր իրականացնում այս ոլորտում՝ անցում կատարելով նոր բիոմետրիկ անձնագրերին և ներկայիս անձնագրերին փոխարինող նույնականացման քարտերին: Ի սկզբանե նույնականացման քարտերը նախատեսված էին որպես վավերական փաստաթուղթ այնպիսի իրավահարաբերություններում, որոնց կարգավորմանն ուղղված իրավական ակտերով նախատեսվում է անձնագրի կամ անձնագրային տվյալների կամ սոցիալական ապահովության քարտի օգտագործումը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով նախատեսված՝ որպես ընտրողի անձը հաստատող փաստաթղթի: Ասինքն՝ վերջինս փոխարինում էր անձնագրին, սակայն հնարավոր չէր նրանով ընտրել կամ քվեարկել: Սահմանադրական բարեփոխումների նախօրեին պարզվեց, որ քառսային վիճակ է, քաղաքացիների ստվար զանգված չունեի վավեր անձնագրեր, որոնցով հնարավոր էր քվեարկություն իրականացնել, և միակ վավեր փաստաթուղթը, որ առկա էր, նույնականացման քարտն էր: Օրենսդիրը, փաստորեն հանրաքվեից ընդամենը մեկ ամիս առաջ փոփոխություն կատարվեց «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքում, որով հնարավոր եղավ քվեարկել նույնականացման քարտերով: Սակայն, սա պարզապես իրավիճակային լուծում էր, որը խորացրեց առանց այն էլ ստեղծված անվտանգության մթնոլորտը երկրի համար կարևորագույն օրենքի՝ Սահմանադրության բարեփոխումների նախօրեին: Այնինչ հսկայական միջոցներ, բավական երկար ժամանակ և ռեսուրսներ էին ծախսվել նշված ոլորտում բարեփոխումներ իրականացնելու նպա-

¹ St ' u Ильин А. В., Оптимизация правотворческой деятельности в современной России (вопросы теории и практики) / под ред. С. А. Комарова, СПб., 2005, էջեր 4-5:

տակով, սակայն պարզվեց, որ այդքան պարզ թվացող խնդիրն անտեսվել էր, որևէ կանխատեսում չէր արվել:

Օրենդրական ակտերի մշակման և ընդունման գործընթացում շտապողականությունը, իրավաբանական տեխնիկայի կանոնների անտեսումն առաջ են բերում այնպիսի բացասական երևույթներ, ինչպիսիք են ոչ բավարար համակարգվածությունը, բացերը, օրենսդրական ակտերի ֆինանսատնտեսական չապահովվածությունը և հասարակական զարգացման իրողություններին բազմաթիվ օրենսդրական կառուցակարգերի անհամապատասխանությունը: Օրենսդրության նման բացթողումների վերացման կարևոր միջոց է ինչպես վերջինիս զարգացման համակարգային գիտական կանխատեսումը, այնպես էլ իրավական նորմերի կիրառման արդյունավետության կանխատեսումը: Բազմաթիվ խոշոր գիտնականներ իրենց աշխատություններում անդրադարձել են առհասարակ կանխատեսման և իրավական ակտերի արդյունավետության կանխատեսման հիմնախնդիրներին:

Եթե ուսումնասիրենք տեսությունը, ապա մի կողմ դնելով որոշ մեկնաբանություններում առկա ոչ էական տարբերությունները, իրավաստեղծ գործունեությունը կարելի է բնորոշել որպես պետական գործունեության ձև՝ ուղղված իրավական նորմերի ստեղծմանը, դրանց լրացմանը, փոփոխմանը կամ վերացմանը: Այլ կերպ ասած, «իրավաստեղծագործություն» և «օրենսդրություն» հասկացությունների կապը կարելի է հանգեցնել «պրոցես-արդյունք» հարաբերակցության: Նման պրիզմայով են հարաբերակցվում նաև «իրավաստեղծագործության արդյունավետություն» և «օրենսդրության արդյունավետություն» հասկացությունները, որոնք գտնվում են ուղղակի պատճառահետևանքային կապի մեջ:¹ Այս տեսակետի հետ կարելի է համաձայնել, քանի որ կարելի է խոսել այս կամ այն պետությունում որակյալ, արդյունավետ օրենսդրության մասին միայն իրավաստեղծ գործունեության արդյունավետության դեպքում: Ցավոք, այս ոլորտում առկա բազմաթիվ գիտական հետազոտություններ պահանջված չեն ժամանակակից օրենսդրության պրակտիկայում: Հավանա-

¹ St 'u Мушинский М. А., Эффективность правотворческой деятельности и эффективность законодательства: соотношение и критерии // Юридическая техника, Ежегодник, 2012, № 6: Техника современного правотворчества: состояние, проблемы, модернизация. Էջ 347:

բար, դա կապված է այն հանգամանքի հետ, որ այդ աշխատություններում բերված չեն գործնական առաջարկություններ, որոնց կատարումը պետք է դառնար իրավաստեղծ գործընթացի պարտադիր տարր: Այնինքն՝ գիտական կանխատեսման կանոնների համակարգը պետք է կիրառվի ինչպես օրենսդրության զարգացման երկարաժամկետ ծրագրերի, այնպես էլ կոնկրետ նորմատիվ իրավական ակտերի մշակման դեմպքում: Առհասարակ խորհրդարան մտնող ցանկացած նշանակալից օրենսդրական նախագիծ պետք է ապահովված լինի ոչ միայն ֆինանսատնտեսական հիմնավորվածությամբ, այլ նաև օբյեկտիվ չափանիշներով իրականացված կանխատեսման նյութերով: Գիտական կանխատեսման առկայությունը հնարավորություն կտա հաղթահարել օրինագծի հեղինակների կանխակալությունը, օրենսդրին հնարավորություն կտա գնահատելու օրինագծի ընդունման հետևանքների ողջ շրջանակը, կնվազեցնի անհաջող օրենսդրական լուծումների բացասական հետևանքները:

Օրենսդրության կանխատեսման գործընթացը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին. 1. Պետք է հետազոտվեն կանխատեսվող օբյեկտի (իրավունքի ճյուղ, նորմատիվ-իրավական ակտերի համակարգ կամ առանձին օրենք) զարգացման հնարավոր տարբերակները՝ առավել արդյունավետ որոշման կայացման նպատակով: 2. Պետք է հաշվարկվեն յուրաքանչյուր տարբերակով խնդրի լուծման դրական և բացասական հետևանքները՝ հիմնված փաստական և էմպիրիկ տվյալների վրա: 3. Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ձևավորված իրավական կարգավորման փոփոխումը ոչ միայն լուծում է որոշակի խնդիրներ, այլև հաճախ առաջացնում է որոշակի բացասական հետևանքներ: Դրանով պայմանավորված կանխատեսման անբաժան մասն է կազմում հեղինակների կողմից առաջադրվող լուծման արդյունավետության կանխատեսումը: 4. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կանխատեսման արդյունքների վրա ազդում են կանխատեսումը մշակողների կարծիքները, արդյունքների օբյեկտիվության տեսանկյունից անհրաժեշտ է ներգրավել անկախ փորձագետներին: 5. Այն դեպքերում, երբ կանխատեսման օբյեկտն ազդում է հասարակության լայն շերտերի շահերին կամ վերաբերում է քաղաքականության և տնտեսության կենսական կարևոր ոլորտներին, կանխատեսման նյութերի մաս պետք է կազմի հասարակական կարծիքի ուսումնասիրումը: 6. Կանխատեսման գործընթացի էական

տարր պետք է հանդիսանա առաջարկվող օրենսդրական լուծման ստուգումը կոռուպցիոն ռիսկերի տեսանկյունից, ինչպես նաև իրավական կարգավորման ամբողջականության տեսանկյունից, որպեսզի օրենսդրական կարգավորումը բացեր չունենա: Վերոնշյալ բոլոր ասպեկտները պետք պարտադիր կանոններ հանդիսանան կանխատեսման գործընթացում:¹ Միաժամանակ կախված կանխատեսման ենթակա օբյեկտի բնույթից և ծավալից կարող են օգտագործվել նաև ոչ պարտադիր կամընտրային կանոններ: Օրինակ, եթե կանխատեսման ենթակա օբյեկտը զարգացած իրավական կարգավորում ունի արտերկրում, նպատակահարմար կլինի համեմատական իրավունքի մեթոդների կիրառումը, տնտեսական հարաբերությունները կարգավորող կամ սոցիալական ոլորտին վերաբերող օրենսդրության կանխատեսման գործընթացում կարող են օգտագործվել մաթեմատիկական մոդելավորման, վիճակագրական և այլ մեթոդներ: Կանխատեսումը պետք է հիմնվի գործող իրավական ակտերի մոնիտորինգի վրա, որպեսզի պահպանվեն պրակտիկայում իրենց արդարացրած իրավական կառուցակարգերը: Միաժամանակ մոնիտորինգի կիրառումը մեծապես բացահայտում է իրավական կարգավորման այն ոլորտները, որտեղ նոր իրավական լուծումներ են պահանջվում: Կանխատեսումն իր բովանդակությամբ էապես տարբերվում է պլաններից և ծրագրերից: Եթե վերջիններս ենթադրում են պարտադիր նպատակներ, ապա կանխատեսումը միշտ այլընտրանքներ ունի, ինչպես օրինակ՝ իրավական խնդրի լուծման այլընտրանքային հնարավորությունները, ինչն օրենսդրին հրարավորություն է տալիս կամ համաձայնել կանխատեսման մշակողների առաջարկներից մեկի հետ կամ գնալ խնդրի լուծման այլ ճանապարհով: Ի տարբերություն օրենսդրական նախագծերին կցվող հիմնավորումներին, որոնք արտացոլում են օրինագծի հեղինակների այլընտրանքը չունեցող կարծիքը, կանխատեսումը ենթադրում է խնդրի օրենսդրական լուծման այլընտրանքային տարբերակների վերլուծությունը և հիմնավորում է յուրաքանչյուր տարբերակի հավանական արդյունավետությունը: Անկասկած կանխատեսման գործընթա-

¹ См. у Радченко В. И., Иванюк О. А., Плюгина И. В., Цирин А. М., Чернобель Г. Т., Статья: Практические аспекты прогнозирования законодательства и эффективности применения прогнозируемых норм, "Журнал российского права", 2008, N 8, էջ 3.

ցի ներդրումը՝ որպես իրավաստեղծ գործընթացի պարտադիր տարր, կհանգեցնի օրենքների ընդունման գործընթացի որոշակի դանդաղության և թանկացման: Սակայն, հապճեպ ընդունված օրենքների կիրառման փորձը, որոնք հանգեցնում են սոցիալական և տնտեսական մեծ կորուստների, ցույց է տալիս, որ կանխատեսման գործընթացում խնայողությունը հանգեցնում է շատ ավելի մեծ վնասների: Ուստի, նպատակահարմար է թվում օրենքի ընդունումը, որով իրավական կանխատեսումը կամրագրվի որպես իրավաստեղծ գործընթացի պարտադիր տարր, այսինքն՝ իրավական կանխատեսումը կվերածվի պետական գործունեության տեսակի:

Իրավաբանական գրականության մեջ մանրամասն մշակված են օրենսդրության կանխատեսման մեթոդների, ձևերի և փուլերի հետ կապված հարցերը: Ինչպես ցանկացած գիտական գործունեության տեսակ, օրենսդրության զարգացման և վերջինիս կիրառման կանխատեսումը ենթադրում է որոշակի հնարքների և մեթոդների համակարգի կիրառում: Իրավական կանխատեսման մեթոդների հիմնախնդիրները բազմիցս դարձել են գիտական ուսումնասիրությունների առարկա: Օրենսդրության զարգացման և վերջինիս կիրառման արդյունավետության կանխատեսման մեթոդոլոգիան կարելի է դասակարգել հետևյալ ձևով: *Փաստական* մեթոդներին բնորոշ է կանխատեսման օբյեկտին վերաբերող փաստացի առկա նյութերի, վերջինիս անցյալի զարգացումների տեղեկատվության վրա հիմնվելը: Մեթոդների նշված խումբը կարող է իրականացվել հետևյալ հերթականությամբ. ա) կանխատեսման օբյեկտի վերաբերյալ հնարավորինս ամբողջական փաստական տվյալների նախանշումը բ) կանխատեսման օբյեկտին վերաբերող տվյալներ պարունակող տեղեկատվական աղբյուրների որոշումը (իրավական մոնիտորինգի տվյալներ, օրենսդրական և իրավակիրառ պրակտիկային վերաբերող ունիսվերսալ և մասնագիտացված տվյալների բազաներ, օրինակ՝ դատական ատյանների և գործադիր մարմինների տվյալները, իրավական համակարգերի, հարկային մարմինների, զանգվածային լրատվամիջոցների էլեկտրոնային տեղեկատվական համակարգերը, վիճակագրական ինֆորմացիան և այլն) գ) կանխատեսման օբյեկտի մասին ստացվող տվյալների (քանակական, որակական) վերլուծությունը և գնահատումը (աշխատանքային խմբի կամ փորձագետների կողմից)՝ ելնելով կանխատեսման նպատակներից: Փաս-

տական մեթոդների կիրառման գործնական նշանակությունը կայանում է իրավական կարգավորումների «ցավոտ կետերի» և դրական փորձի բացահայտման մեջ, որոնք արդյունքում կարող են ծառայել որպես ելակետային նյութ կանխատեսման սցենարների նախապատրաստման համար, ինչպես նաև օգտագործվել խնդրահարույց իրավիճակների հաղթահարման հնարավոր ուղիների որոշման և դրական փորձի ամրագրման նպատակով: *Վիճակագրական* մեթոդը կանխատեսման օբյեկտի վերաբերյալ քանակական տեղեկատվության մշակման հնարքների ամբողջություն է՝ ուղղված նրանում առկա մաթեմատիկական օրինաչափությունների վերհանմանը՝ կանխատեսման մոդելներ ստանալու նպատակով: *Էքստրապոլիացիայի* մեթոդը կարևորագույն հետազոտական մեթոդ է և բնորոշվում է որպես հետազոտվող օբյեկտի անցյալի և ներկայի վիճակի փոխանցումը վերջինիս ապագայի վիճակին:¹ Առավել լայն, տեսական առումով այս մեթոդը կարևոր նախապայման է գիտության բոլոր ոլորտներում նոր գիտելիքի ստեղծման համար: Էքստրապոլիացիայի մեթոդը, որը կիրառվում է օրենսդրության զարգացման և վերջինիս կիրառման արդյունավետության կանխատեսման գործընթացում, բնորոշվում է հետազոտվող օբյեկտի անցյալի և ներկայի վիճակի վերաբերյալ ստացված արդյունքների՝ վերջինիս՝ ապագայի վիճակի վրա տարածումամբ: *Համեմատական իրավունքի* մեթոդը նպատակահարմար է կիրառել ազգային մակարդակում հասարակական հարաբերությունների զարգացման դինամիկայի որոշման համար՝ հաշվի առնելով արտերկրի համապատասխան փորձը, այն դեպքում, երբ այնտեղ կանխատեսման օբյեկտն ունի զարգացած իրավական կարգավորում: Անհրաժեշտության դեպքում օրենսդրության զարգացման և վերջինիս կիրառման արդյունավետության կանխատեսման գործընթացում կարող են օգտագործվել նաև *մաթեմատիկական* մոդելավորման մեթոդներ: Օրենսդրության զարգացման և վերջինիս կիրառման արդյունավետության կանխատեսման գործընթացում լայն կիրառություն ունի *փորձագիտական գնահատման* մեթոդը: Իրազեկ մասնագետների գնահատականն արդեն այսօր կա-

¹ Ст' у Новый энциклопедический словарь. Научное изд-во "Большая российская энциклопедия", 2002, էջ 1391; Райзберг Б. А., Лозовский Л. Ш., Статодубцев Е. Б. Современный экономический словарь. М., 1997, էջ 400:

յուն հիմք է կոնկրետ իրավական նորմերի արդյունավետության, օրինականության վիճակի, բնակչության իրավագիտակցության, վերջինիս քաղաքական և իրավական ակտիվության, ինչպես նաև իրավունքի տեսության այլ ակտուալ խնդիրների կանխատեսման համար:¹ Փորձագետներ ընտրելիս հետազոտողների խումբը ղեկավարվում է նրանով, որ փորձագետի գնահատականի հիման վրա կատարվող կանխատեսման հիմքում դրվի մասնագետների կարծիքը՝ հիմնված վերջիններիս մասնագիտական գիտելիքների և պրակտիկ փորձի վրա:² Այդուհանդերձ փորձագիտական գնահատման մեթոդն ունի մեկ թերություն՝ վերջինիս հիմքում դրվում է մասնագետի սուբյեկտիվ կարծիքը: Այդ պատճառով հիշյալ մեթոդի կիրառման դեպքում պետք է հաշվի առնել, որ փորձագետների գնահատականի հստակությունը ուղղակիորեն կախված է ներգրավված մասնագետների կոմպետենտությունից և առաջադրված հարցերին պատասխանների հստակությունից: Կանխատեսման մշակման փուլում փորձագետներին հրավիրում են լուծելու տարատեսակ խնդիրներ՝ կանխատեսման օբյեկտի հստակեցման, օբյեկտի կանխատեսական գնահատման, և վերջապես կանխատեսման հստակության ստուգման նպատակով:³ Որպես փորձագետներ կարող են ներգրավվել նեղ պրոֆիլի մասնագետներ, որոնք չեն հանդիսանում կանխատեսում իրականացնող կամ պատվիրող կազմակերպությունների աշխատակիցներ, պրակտիկ աշխատողներ, որոնք մասնագիտացված են հենց կանխատեսական գործունեության մեջ: Փորձագիտական գնահատման մեթոդի հիմնական տեսակներն են՝ միանձնյա փորձագետի գնահատականը և փորձագետների խմբի կողմից տրվող գնահատականը (որը ներկայացնում է փորձագետների խմբի ընդհանրացված գնահատականը): Փորձագետների կարծիքի արտահայտման միջոցների թվին են դասվում՝ հարցազրույցը (հարց-պատասխան սկզբունքով), հարցաթերթիկի լրացումը (կանխատեսման օբյեկտի վերաբերյալ մասնագետների կարծիքի վերհանումը հատուկ մշակված հարցաթերթիկի միջոցով), փորձագետի եզրակացությունը:

¹ St 'u Сырых В. М., Социология права, 2002, էջ 445:

² St 'u Глушков В. М., О прогнозировании на основе экспертных оценок // Наукоедение, Прогнозирование, Информатика, Киев, 1970, էջ 23:

³ St 'u Бешелев С. Д., Гурвич Ф. Г., Математико-статистические методы экспертных оценок, М., 1980, էջեր 9-11:

Փորձագետի գնահատականի հետ կանխատեսման գործընթացում մեծապես կիրառվում է նաև *հասարակական կարծիքի ուսումնասիրությունը*, որը հատկապես կարևորվում է այն փոփոխությունների դեպքում, որոնք վերաբերում են հասարակության լայն շերտերի շահերին: Ինչպես նշում է Յու. Ա. Տիխոմիրովը «վատ» կամ «թույլ» օրենքների մեծ թվի պատճառն իրավական ակտերի ընդունման պրակտիկան է առանց հաշվի առնելու առկա հանրային շահերը:¹ Հասարակական կարծիքի ուսումնասիրման համար կիրառվում են սոցիոլոգիական մեթոդներ: Հասարակական կարծիքը կարող է արտահայտվել սոցիոլոգիական հարցումների, ինչպես նաև հասարակական լսումների, հավաքների, գիտական և պրակտիկ կոնֆերանսների, ՁԼՄ-ներում հասարակական քննարկումների և այլ ձևերով: Կանխատեսման օբյեկտին առնչվող հասարակական կարծիքի վերհանման դեպքում կարող են դրվել հետևյալ հարցերը. ինչպիսի՞ն կլինի նախագծվող օրենքի ընդունման դեպքում հասարակության վերաբերմունքը՝ դրական, չեզոք, թե՞ բացասական, որքանո՞վ են իրականանալի օրինագծով սահմանված նորմատիվ պահանջները, օրենքի նախագծում սահմանված կանոնակարգերը կարող են արդյո՞ք ապահովել կոնկրետ հասարակական հանարբերություններում օրենքի արդյունավետ կիրառումը, կնպաստի արդյո՞ք օրենքի նախագիծն օրինականության, հասարակական կարգի ամրապնդմանը, քաղաքացիների իրավագիտակցության բարձրացմանը, ինչպիսի բացասական հետևանքների կհանգեցնեն օրինագծով առաջադրվող օրենսդրական լուծումները:

Իրավական կանխատեսման վերաբերյալ գիտական գրականության մեջ գրեթե ուշադրություն չի դարձվել օրենսդրության զարգացման և վերջինիս կիրառման արդյունավետության կանխատեսման գործընթացն իրականացնող սուբյեկտների խնդրին: Հստակ է, որ ապագա իրավիճակի տարբեր զարգացումների, հասարակական հարաբերությունների զարգացման դինամիկայի, վերջինիս զարգացման հնարավոր ուղիների գիտականորեն հիմնավորված տարբերակների մշակումն իր բնույթով գիտական գործունեություն է: Այդ առումով կանխատեսումն իրականացնող սուբյեկտների բնորոշ-

¹ St' u Тихомиров Ю. А., Правовое регулирование: теория и практика. М., 2010, էջ 200:

ման հարցում տեղին է անալոգիայի կիրառումը գիտնականների հետ: Միևնույն ժամանակ կանխատեսամաբ զբաղվող սուբյեկտային կազմն ունի որոշակի առանձնահատկություններ պայմանավորված նշված գործունեության բնությո՞վ: Նշված գործունեության անմիջական սուբյեկտներ կարող են հանդիսանալ գիտահետզոտական կազմակերպությունները, գիտակրթական հաստատությունները, որոնք մասնագիտացված են իրավունքի ոլորտում գիտական հետազոտությունների իրականացման մեջ, իշխանության մարմինների համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումները, ինչպես նաև որպես մասնագիտացված գործունեություն կանխատեսում իրականացնող խմբերը: Իրավունքի ճյուղի զարգացման կանխատեսման գործընթացում պետք է ներգրավվել ոչ միայն իրավաբանների, որոնք տիրապետում են իրավունքի ճյուղին վերաբերող իրավական կարգավորման առանձնահատկություններին, այլ նաև այնպիսի մասնագետների, ովքեր ընդունակ են գնահատել կանխատեսման օբյեկտի զարգացման հեռանկարները և վերջինիս հետ կապված սոցիալական և տնտեսական խնդիրները: Իրավաբանների խնդիրն այս դեպքում առավել ռացիոնալ իրավական մոդելների սահմանումն է, որոնք պետք է ապահովեն օբյեկտի առավել դինամիկ զարգացումը: Պետական կառավարման ոլորտում կանխատեսման իրականացման գործառնությունների, որպես կանոն, հանդիսանում են գործադիր իշխանությանն մարմինները: Պետական կառավարման սուբյեկտների հետ միասին վերջին շրջանում իրավունքի ոլորտում կանխատեսման աշխատանքներին ակտիվ ներգրավվում են նաև ընկերություններ, որոնք իրավաբանական կանխատեսման խնդիրներով զբաղվող իրենց կառուցվածքային ստորաբաժանումներն են ստեղծում: Ժամանակի ընթացքում բազմաթիվ խորհրդատվական ընկերություններ կսկսեն տրամադրել հենց իրավաբանական կանխատեսման ծառայություններ:

Օրենսդրության զարգացման և վերջինիս կիրառման նկատմամբ կանխատեսման գործընթացը կարելի է բաժանել փուլերի: Գիտնականների շրջանում միասնական մոտեցում չկա փուլերի տարանջատման և վերջիններիս թվի մասով, այնուամենայնիվ, կարելի է նշել, որ հետազոտողների մեծամասնությունն առանձնացնում են միևնույն փուլերը: Առավել տարածված է 7 փուլերի առանձնացումը: Այսպես օրինակ Վ. Ս. Լոմտևան իրավաստեղծ և իրավա-

կիրառ գործընթացում կանխատեսման գործընթացը բաժանում է հետևյալ փուլերի՝ ելակետային, նախապատրաստական, աշխատանքային, ստուգման փուլեր, իրավաստեղծ և իրավակիրառ գործընթացում կանխատեսման ցանկալի արդյունքի կիրառման փուլը, սինթեզային և գիտական-աբստրակցիոն փուլեր¹:

Օ. Ա. Գավրիլովի կողմից առաջադրված կանխատեսական (պրոգնոստիկ) ուսումնասիրությունների կառուցվածքը ի տարբերություն վերոնշյալի հիմնականում հիմնված է պրակտիկայի վրա, այնտեղ բացակայում են առանձին ֆակուլտատիվ փուլերը և առանձնացվում են հետևյալ հինգ փուլերը. 1. Հետազոտության խնդրի սահմանումը և վերջինիս ծրագրի մշակումը, 2. Պրոգնոստիկ ինֆորմացիայի վերլուծություն և հետազոտություն, տվյալների բազայի ստեղծումը, 3. Կանխատեսման նյութի ձևավորումը, 4. Կանխատեսման ստուգման գործընթացը, 5. Կանխատեսման արդյունքների ձևակերպումը և «պատվիրատուին» ներկայացնելը²:

Առաջին փուլում ի հայտ է գալիս կանխատեսման իրականացման անհրաժեշտություն: Կանխատեսման իրականացման որոշումը կայացվում է պետական իշխանության շահագրգիռ մարմնի կողմից, ինչպես նաև ոչ պետական կազմակերպությունների կողմից (հասարակական կազմակերպությունների, կոմերցիոն կազմակերպությունների, բիզնես կառույցների և այլն): Որպես ընդհանուր կանոն սուբյեկտը, որն առաջ է քաշում կանխատեսման հետազոտման իրականացման պահանջ, դառնում է կանխատեսական հետազոտության պատվիրատուն:³ Երկրորդ փուլում, որն առավելապես կրում է կազմակերպչական բնույթ, հստակեցվում է կանխատեսական հետազոտությունների կատարողը, կնքվում է համապատասխան պայմանագիր: Կատարողը կարող է ընտրվել կամ մրցույթի անցկացման կամ մասնակիցների ուղղակի ընտրության միջոցով: Երկրորդ փուլի արդյունքն օրենսդրության զարգացման և վերջինիս կիրառման

¹ St 'u Ломтева В. С., Прогнозирование в правотворчестве и правоприменении, М., 2006, Թեկնածուական ատենախոսություն, էջեր 39–41:

² St 'u Гаврилов О. А., Стратегия правотворчества и социальное прогнозирование, М., 1993, էջեր 33–38:

³ St 'u Павлодский Е. А., Опыт прогнозирования эффективности правового акта с помощью экспертных оценок, Проблемы совершенствования советского законодательства // Труды ВНИИСЗ, էջ 73:

կանխատեսման գիտահետազոտական աշխատանքների իրականացման պայմանագրի կնքումն է: Երրորդ փուլում կազմվում են պրոգնոստիկ հետազոտությունների ծրագրերը: Ծրագրում պետք է որոշակի լինի կանխատեսման օբյեկտը, այն իրականացնող սուբյեկտները, հետազոտության իրականացման նպատակը և խնդիրները, նշված լինեն հետազոտության սկզբունքները, կառուցվածքը և այլն: Չորրորդ փուլում իրականացվում է կանխատեսման օբյեկտի անմիջական հետազոտում ծրագրում նախանշված նպատակների և խնդիրների հիման վրա, նշված էտապը համարվում է բազային: Հետազոտողներին կարող է առաջադրվել կանխատեսման օբյեկտի ապագա վիճակի, զարգացման դինամիկայի հնարավոր տարբերակների վերաբերյալ աշխատանքային վարկած: Նախնառաջ պետք է հստակեցնել կանխատեսման օբյեկտն ինչպիսի կոնկրետ իրողությունների և գործընթացների ազդեցության տակ է ձևավորվել և գոյություն ունի ներկայիս պայմաններում իր բոլոր դրական և բացասական հատկություններով, ինչպիսի սոցիալական-իրավական երևույթներ են առավել ինտենսիվորեն ազդում կանխատեսման օբյեկտի վրա և որոշիչ դեր խաղում վերջինիս հետագա զարգացման, կանխատեսման օբյեկտի փոփոխությունների, վերջինիս ներկա վիճակից նորին անցնելու փուլում:¹ Ժամանակագրական հատկանիշներից կախված կանխատեսման օբյեկտի վրա ազդող գործոնները կարելի է դասակարգել հետևյալ տեսակների՝ գործոններ, որոնք մշտապես ազդում են կանխատեսման օբյեկտի վրա, երկարաժամկետ ազդող գործոններ, կարճաժամկետ և իրավիճակային: Բովանդակային առումով կարելի է նշել տնտեսական, քաղաքական, մշակութային, իրավական, գաղափարական, կրոնական, ժողովրդագրական, գլոբալիզացիոն և այլ գործոնները: Հինգերորդ փուլում կանխորոշվում են կանխատեսական հետազոտման արդյունքները, առաջարկվում են կանխատեսման օբյեկտի զարգացման հնարավոր տարբերակները: Նախքան կանխատեսական հետազոտության վերջնական արդյունքները որոշելը, նպատակահարմար է կանխատեսման օբյեկտի և նախնական եզրահանգումների վերաբերյալ հանրային կարծիքի պարզումը: Հանրային կարծիքի վերհանումը

¹ St 'u Социология права: Учеб. пособие / В. В. Глазырин, Ю. И. Гревцов. М., 2001, էջ 437:

պետք է դիտարկել որպես կանխատեսման գործընթացի պարտադիր մաս հատկապես այն դեպքերում, երբ խնդիրները, որոնցով իրականացվում են կանխատեսական հետազոտություններ, ունեն հանրային նշանակություն: Բացի այդ տվյալ փուլում հնարավոր է արտաքին փորձագետների ներգրավումը կանխատեսական հետազոտությունների նախնական արդյունքներին անկախ գնահատական տալու նպատակով: Կանխատեսական հետազոտությունների վերջնական տարբերակը կազմվում է՝ հաշվի առնելով հասարակական կարծիքը և ներգրավված արտաքին փորձագետների կարծիքը: Անցկացված կանխատեսական հետազոտությունների արդյունքներով կարող է կազմվել կանխատեսման օբյեկտի ապագա վիճակի նորմատիվ մոդելը, ինչպես նաև տրվեն օրենսդրության զարգացման և վերջինիս կիրառման օպտիմալ մոդելին ուղղված կոնկրետ առաջարկություններ: Ինչպես նշում է Վ. Ս. Լոմտևան իրավաստեղծ և իրավակիրառ գործընթացում հաստատման փուլը ներառում է ցանկալի արդյունքի ստուգմանն ուղղված ճանաչողական գործողություններ, որոնց ընթացքում պարզվում է վերջինիս ամբողջականությունը, հիմնավորվածությունը, ավարտվածության աստիճանը, ճշտվում, վերանայվում է նախնական հետազոտական վիճակը՝ ուղղված կանխատեսման օբյեկտի վերաձևմանը:¹ Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել նաև Օ. Ա. Գավրիլովի դիտարկումն առ այն, որ օրենսդրության և իրավական համակարգի այլ տարրերի կանխատեսումը, որպես կանոն, չի կարող անմիջականորեն հաստատվել պրակտիկայով, քանի որ մեծամասամբ դրա համար պետք է օրենսդրության զարգացման բավականին երկար փուլ:² Վերջնական վեցերորդ փուլում տեղի է ունենում արդյունքների տեխնիկական ամփոփում և պատվիրատուին հանձնում: Վերջնական արդյունքը ուղարկվում է պատվիրատուին, որը կարող է կանխատեսման գնահատականները և առաջարկություններն օգտագործել օրինաստեղծ և իրավակիրառ գործունեության պլանավորման, կոնկրետ օրինագծերի կազմման, օրենսդրության զարգացման կոնցեպտի մշակման, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջար-

¹ St 'u Ломтева В. С., Прогнозирование в правотворчестве и правоприменении, М., 2006, Թեկնածուական ատենախոսություն, էջ 41.

² St 'u Гаврилов О. А., Стратегия правотворчества и социальное прогнозирование, М., 1993, էջ 38:

կույթունների մշակման համար: Միաժամանակ պետք է հաշվի առնել, որ պրակտիկայում հնարավոր են դեպքեր, երբ ներկայացված լինեն օրենսդրության զարգացման և վերջինիս կիրառման կանխատեսման այլընտրանքային տարբերակներ:

Ի վերջո, կիրառելով կանխատեսման գործառույթի մեթոդները և բոլոր վերոնշյալ փուլերը՝ արդյունքում հնարավոր է ստանալ գրագետ, որակյալ օրենսդրական ակտ, սակայն գործնականում այդ ակտը չկիրառվի, խնդիրներ առաջացնի պայմանավորված արդեն իսկ ձևավորված օրենսդրության խնդիրներով: Այսինքն՝ յուրաքանչյուր ակտի պրակտիկ կիրառությունն անհրաժեշտ է դիտարկել ոչ թե մեկուսացված, առանձին այլ առկա օրենսդրական համակարգի կոմպլեքսայնության մեջ: Եվ բնականաբար, կախված օրենսդրական ակտի տեսակից գործնականում վերջինիս հիմնավորվածության, արդյունավետության ստուգման տեսանկյունից բավական երկար ժամանակ է հարկավոր, այլ կերպ ասած օրենսդարական ակտը, լուծումը պետք է անցնի ժամանակի փորձությունը, գոյակցի առկա օրենսդրական համակարգի, այլ իրավական լուծումների հետ, և միայն նման «ճանապարհ» անցնելուց հետո կարելի է խոսել օրենսդրական ակտի հիմնավորվածության, արդյունավետության մասին:

Օրենսդրության զարգացման և վերջինիս կիրառման նկատմամբ կանխատեսման ոլորտում գիտական հետազոտությունների ակտիվացման անհրաժեշտությունը Հայաստանի պետության և իրավունքի զարգացման այսօրվա փուլում առանձնապես կարևոր է կապված ՀՀ սահմանադրությամբ նախանշված այնպիսի նպատակներով, ինչպիսիք են ժողովրդավարական իրավական պետության կառուցումը, քաղաքացիական հասարակության կայացումը, մարդու և քաղաքացու իրավունքների և օրինական շահերի անվերապահ պահմանումը: Նշված ուղղությամբ աշխատանքների գործնական նշանակությունը հիմնավորվում է առաջին հերթին նրանով, որ օրենսդրության արդյունավետության ապահովումը համարվում է պետական իշխանության մարմինների, գիտական հաստատությունների և կազմակերպությունների գործունեության առաջնային ուղղություններից մեկը, մեր երկրում օրինականության, իրավակարգի պահպանման երաշխիքը: Օրենսդրության արդյունավետության բավարար մակարդակի կարելի է հասնել գրագետ իրավական կանխատեսման միջոցով: Օրենքի արդյունավետությունը ենթադրում է վեր-

ջինիս որակի գնահատական առաջին հերթին այն տեսանկյունից, թե որքանո՞վ են իրականացվել նրա մեջ դրված խնդիրները, իրավական կարգավորման նախանշված նպատակը իրականացված է արդյո՞ք, որքանո՞վ է այն ներդաշնակ գործող օրենսդրական համակարգի հետ, որքանո՞վ է բարենպաստ օրենքի գործողության մեջ դնելով պայմանավորված հնարավոր կամ արդեն վրա հասած սոցիալ-տնտեսական և այլ հետևանքների ազդեցությունը: Օրենսդրության և իրավական նորմերի կիրառման արդյունավետությանն ուղղված կանխատեսման գծով առաջարկությունների մշակումը նոր ուղիներ կհարթի Հայաստանի Հանրապետության օրենսդրության և իրավական համակարգի զարգացման համար:

Ани Варданян

Аспирант кафедры теории и истории государства и права ЕГУ

ПРАКТИЧЕСКИЕ АСПЕКТЫ ФУНКЦИИ ПРОГНОЗИРОВАНИЯ В ПРАВООТВОРЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Рассматриваются практические аспекты прогнозирования законодательства и эффективности применения прогнозируемых норм. Отдельно рассматриваются формы, методы, этапы и субъекты прогнозирования законодательства. Обосновывается актуальность исследования проблем прогнозной обеспеченности как неотъемлемого элемента процесса подготовки и принятия законодательных решений.

Ani Vardanyan

PHD Student at the YSU Chair of Theory of State and Law

PRACTICAL ASPECTS OF PREDIKTION FUNCTION IN LAW-MAKING PROCESS

The article examines the practical aspects of prediction function in law-making process. Separately are considered forms, methods, stages and performers of prediction in law-making process. The research of law forecasting problems, as an integral part of the preparation and adoption of legislative solutions is relevant.

Բանալի բառեր՝ կանխատեսում, իրավաստեղծ գործընթաց, օրինաստեղծ գործունեություն, օրենսդրության արդյունավետություն, օրենսդրության զարգացում, կանխատեսական հետազոտություն:

Keywords: *Forecasting, Law-making process, Legislative activity, Effectiveness of legislation, Development of legislation, Forecasting research.*

Ключевые слова: *прогнозирование, правотворческий процесс, законодательная деятельность, эффективность законодательства, развитие законодательства, прогнозные исследования.*